ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«21» մարտի 2018թ. № 111-Հ

ՀՐԱՄԱՆ

«ՎԱԼԿԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՐՊԵՍ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ, ԽԱԽՏՈՒՄԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Վալկան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունում 2018թ. մարտի 01-ի թիվ 03/24-2/3737-18 գրությամբ հարուցված վարչական վարույթի նյութերի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2018թ. փետրվարի 02-ի թիվ 29-Ա հրամանի հիման վրա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից իրականացված «Վալկան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 2017թ. հունվարի 01-ին տրված թիվ ԽՏ-009 խաղատան կազմակերպման լիցենզիայի պայմանների և պահանջների կատարման ստուգման արդյունքում 2018թ. փետրվարի 27-ին կազմված թիվ ԽՏ-01 ակտի՝ «Վալկան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը կատարել է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջի խախտում, ինչպես նաև «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի պահանջի խախտում, 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ժ» կետի պահանջի խախտում՝ մեկ դեպքով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի «ը» կետի պահանջի խախտում՝ երկու դեպքով:

Վերոգրյալի հիման վրա ղեկավարվելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ

հոդվածի 4-րդ մասի 13-րդ կետով, «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «է» և «ը» կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. մայիսի 18-ի թիվ 503-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 11-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը խախտելու համար «Վալկան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ, որպես պատասխանատվության միջոց կիրառել նախազգուշացում:
2. «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի պահանջը խախտելու համար «Վալկան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ, որպես պատասխանատվության միջոց կիրառել նախազգուշացում:
3. Սահմանել 15-օրյա ժամկետ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի և «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի պահանջների կատարումն ապահովելու համար:
4. «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «է» կետով սահմանված պահանջը խախտելու համար «Վալկան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ նշանակել տուգանք հինգ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
5. «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «ը» կետով սահմանված պահանջը խախտելու յուրաքանչյուր դեպքի համար «Վալկան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ նշանակել տուգանք

երկու հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ ընդամենը չորս հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

6. Նշանակված տուգանքը ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գանձապետական 900005024154 հաշվեհամարին:

7. Նշանակված տուգանքը սույն հրամանն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո՝ ամբողջությամբ կամ մասամբ վճարված չլինելու դեպքում, ենթակա է հարկադիր կատարման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով:

8. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ այն ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

9. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:

Վ. ԱՐԱՄՅԱՆ